Միաժամանակ, անընդմեջ շարունակվում էին անհավասար մարտերը Ղափան ներխուժած օսմանյան զորաբանակների և նրանց միացած Ֆաթհ-Ալի սուլթանի և այլ տեղական ֆեոդալների ասպատակիչ զորքերի դեմ։

Դավիթ-բեկի մահից և Հալիձորի անկումից հետո, Մխիթար-բեկի գլխավորությամբ շարունակվող ազատագրական պայքարը, առավելապես, ամրացված հենակետերից զուրկ պարտիզանական կռիվներով էր բնորոշվում։ Հերոսական դրվագներով հարուստ այդ գոյամարտն անշուշտ բախտորոշ դեր խաղաց Սյունյաց լեռնաշխարհի հայության պատմական ճակատագրում, ամրապնդելով հետագա սերունդների հավատքը սեփական ուժերի նկատմամբ։ Սակայն, ինչպես վերը տեսանք, 1722—1728 թթ. ծավալված հաղթական ռազմական գործողություններին զուգահեռ երևան եկան նաև Դավիթ-բեկի՝ իրավիճակի արագ փոփոխությունների ոլորտում ճիշտ կողմնորոշվող, իրատես պետական-քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները, որով և կարճ ժամանակամիջոցում, օգտվելով Իրանում կենտրոնական իշխանության բացակայության պայմաններից, պատմական Սյունիքի լեռնային տարածքում ստեղծվեց զուտ հայկական մի իշխանություն, որից սարսափում էին ոչ միայն տեղական խաներն ու այլազգի իշխանավորները, այլ նաև օսմանյան բանակի զորահրամանատարները և որին ստիպված էր ճանաչել և հաշվի առնել օտար ներխուժման դեմ դիմադրությանը նախանձախնդիր շահ Թահմասպ II-ը[36]։

БОРЬБА ДАВИД-БЕКА ПРОТИВ ОСМАНСКОГО ВТОРЖЕНИЯ И ЕГО ВЗАИМООТНОШЕНИЯ С СИЛАМИ ИРАНСКОГО АНТИОСМАНСКОГО СОПРОТИВЛЕНИЯ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

Резюме

Осуществленное С. Арамяном новое полное, оснащенное научным исследованием критическое издание исторического труда представляет собой основной источник по истории освободительных боев 1722—28 гг. в Сюнике, возглавленных Давид-беком, записанного Г. Степаносяном. Оно дает возможность пересмотреть, уточнить и заново истолковать некоторые обстоятельства политической деятельности и военных действий, осуществлявшихся руководителями движения в условиях быстрых перемен политических ситуаций.

На основе параллельных данных некоторых армянских и, в особенности, персидских источников и архивных документов в статье раскрываются отдельные вопросы, имеющие отношение к событиям периода османской оккупации.

Прилагается персидский оригинал с переводом на армянский язык одного из использованных источников—новонайденного указа 1724 г. шаха Тахмаспа II, направленного одному из противников Давид-бека, правителю Баргушата, Фатх-Али-султану.

---

36 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 161—175։